

ԹՈՒՐԹՄԵՆՉԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
Ա. Ս. ԳՐԻԲՈՅԵՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ՎԱՀՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմում Ա. Ս. Գրիբոյեդովի ղործունենությունը լուսաբանող խորհրդային պատմագրություն ակնառունվածումներից է Թուրքմենչայի պայմանագրի (տրակտատի) կնքմանը (1828թ. փետրվարի 10) Ա. Ս. Գրիբոյեդովի մասնակցությունը Հարցի մեկնաբանումը: Ա. Ս. Գրիբոյեդովի ընդհանուր դիվանագիտական ղործունենությունը լուսաբանման իմաստով Հարցն ունի կարևոր նշանակություն:

Խորհրդային պատմաբան Օ. Ի. Պոպովան այդ կապակցությամբ գրում է. «Ինչ վերաբերում է Թուրքմենչայի պայմանագրի հոդվածների կազմմանը Գրիբոյեդովի մասնակցությունը Հարցին, ապա դրա վերաբերյալ ճշմարիտ տվյալներ չլինելու պատճառով այդ Հարցը մինչև այժմ համարվում է չլուծված: Հարցը որոշ չափով լուսաբանված է ուսումնասիրող Լ. Ս. Սեմյոնովի կողմից»¹: Վերջինս հանգամանորեն շարադրելով Թուրքմենչայի պայմանագրի կնքման պատմությունը, գտնում է, որ պայմանագիրը նախապատրաստվել է ոչ միանգամից: Նրա տարբեր հոդվածները տեքստի մեջ են մտցվել տարբեր ժամանակներում: Հայ ժողովրդին վերաբերող հոդվածները, այսինքն՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու (հոդված III, IV), հայերի ներգաղթի (հոդված XV) հարցերը, հիմնականում կազմվել են Ա. Ս. Գրիբոյեդովի կողմից: «... Արևելյան Հայաստանի միացումը առաջին պահանջն էր, որ առաջ քաշվեց ցարական կառավարությունից կողմից 1826 թ. ռուս-պարսկական պատերազմը սկսվելու հետ մեկտեղ, որպես ապագա հաշտության հիմնական պայմաններից մեկը: Բայց հայկական շահերը պաշտպանող մյուս պայմանները չէին բովանդակում ո՛չ Ա. Ս. Մենչիկովի առաջարկություններում, որոնք նա Պարսկաստանից (ուր գնացել էր հատուկ առաքելությամբ) վերադառնալուց հետո 1826 թ. վերջին ներկայացրել էր արտաքին ղործերի նախարար Նեսելրոդին, ո՛չ կառավարական նախադժերում, որոնք կազմվել էին 1827 թ. առաջին կեսին: Այդ հոդվածները կազմվել էին պարսկական ղորքերին Երևանի և Նախիջևանի խանությունների տարածքներից դուրս մղելուց հետո, ռուս-պարսկական հաշտության բանակցությունների ընթացքում»²:

¹ О. И. Попов а. Грибоедов дипломат. М., 1964, с. 102.

² Л. С. Семенов. К вопросу о значении Туркменчайского договора для истории Армении. — "Историко-филологического журнала" (далее — ИФЖ), 1959, № 4, с. 105-106.

Համեմատելով և քննադատորեն վերլուծելով փաստերը՝ Լ. Ս. Սեմյոնովը ճիշտ եզրակացնում է. «Պայմանագրի հիմնական դրույթները ձևակերպվել էին Պետերբուրգում և շարադրվել էին մի շարք փաստաթղթերում, որոնք ուղարկվել էին Ի. Ֆ. Պասկևիչին, որը 1827 թ. մարտին, Ա. Պ. Երմոլովի պաշտոնաթողությունից հետո, ղեկավարում էր զորքերը և լիազորված էր Պարսկաստանի հետ հաշտություն կնքելու: Այդ փաստաթղթերը Ջալալ-օղլիի մոտ ճամբար հասցվեցին 1827 թ. մայիսի 24-ին իսկական պետական խորհրդական Ա. Մ. Օբրեսկովի կողմից, որը նշանակված էր երկրորդ լիազորված անձ և միաժամանակ, Ա. Ս. Գրիբոյեդովի փոխարեն, Պասկևիչի ղեկավարության գրասենյակի պետ: Օբրեսկովը Պետերբուրգից բերեց «Պարսկաստանի հետ ապագա հաշտության կնքման հիմքերին վերաբերող» ցարական ռեսկրիպտը՝ «Հաշտության և առևտրի տրակտատների նախագծերով» և նշված երկու ակտերի վերաբերյալ լրացուցիչ այլ ցուցումներով...»³: Ծարունակելով վերլուծությունը՝ հեղինակը եզրակացնում է, որ պետերբուրգյան նախագծի տեքստն էլ է ենթարկվել փոփոխության: «Մանրակրկիտ դատելով, — դրում է Նեսելրոդեն Պասկևիչին, — երբ Պարսկաստանից ստացվեց հաշտության պայմանագրի տեքստը, ես թուրքմենչայի տրակտատի հոդվածները այս հարցի կապակցությամբ բարձրագույն հրահանգներին համապատասխան տրված, ամենայն մանրամասնությամբ մտածված և խստագույնս ճշտությամբ արված գտա»⁴:

Անդրադառնալով ղաչնագրի նախնական տարբերակներին՝ Լ. Ս. Սեմյոնովը եզրակացնում է. «Թուրքմենչայի տրակտատի համադրումը ռուսական լիազորված անձի հրահանգների հետ, որոնք մշակվել էին Պետերբուրգում, ցույց է տալիս, որ հայկական շահերը պաշտպանող հոդվածները կամ չկային պայմանագրի տեքստում կամ էլ միայն նախատեսվում էին: 1827 թ. հուլիսին Կարա-Ջիաղինում վարվող ռուս-պարսկական բանակցությունների ժամանակ այդ հարցերին (բացառությամբ Երևանի և Նախիջևանի խանությունների միացման) չանդրադարձան: Տրակտատի վերջնական պայմանները ձևակերպվեցին հաջորդ բանակցությունների ժամանակ, Դեհ-Կարխանում՝ 1827 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Հետևաբար, ոչ թե Պետերբուրգում, այլ այստեղ՝ տեղում, և հենց այդ ժամանակաընթացքում պետք է ձևակերպվեին և հաշտության պայմանագրի մեջ մտցվեին այն հոդվածները, որոնք պաշտպանում էին Հայաստանի շահերը»⁵:

Պատմաբանի նախանձախնդրությամբ, հետևողականորեն, ավելի հաճախ տրամաբանորեն Լ. Ս. Սեմյոնովը վեր է հանում այն պատճառները, որոնցով պայմանավորված էր Ա. Ս. Գրիբոյեդովի՝ վերոհիշյալ հոդվածները պայմանագրի մեջ մտցնելու նախաձեռնող լինելը: Նա գտնում է, որ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու և պարսկահայերի դե-

³ Л. С. Семенов. Նշվ. աշխ., էջ 106:

⁴ Նույն տեղում, էջ 106, տես նաև՝ "Несельроде — Паскевичу. 28 апр. 1827г." Акты Кавказской археографической комиссии (далее — АКАК), т. VII, Тифлис, 1878, с. 541. Լ. Ս. Սեմյոնովը գտնում է, որ այս խոստովանությունը հազիվ թե հնարավոր լինե՞ր՝ եթե խոսվեր այն նույն ստորագրած տեքստի ստացման մասին, որն ինքը նախարարն էր ուղարկել ղրանից առաջ՝ իբրև նախագիծ:

⁵ Л. С. Семенов. Նշվ. աշխ., էջ 107:

պի Ռուսաստան գաղթեցնելու հարցում պարսկական կողմը ոչ միայն շահագրգռված չէր, այլև այդ ամենին խանգարում էին Կաջարական սարդար Հուսեյնը, նրա եղբայր Հասանը և Նախիջևանի Քերիմ խանը: Իսկ գահաժառանգ Աբբաս Միրզան գլխավորը համարում էր տարածքների և ռազմատուգանքի հարցերը և ամեն կերպ առարկում էր Հայաստանի վերաբերյալ «մանր» հողվածները պայմանագիր ընդգրկելուն, դրա համար էլ 1827 թ. դեկտեմբերի 9-ին նրանք վիճարկում էին յուրաքանչյուր հողվածը⁶: Լ. Ս. Սեմյոնովը եզրակացնում է, որ «Հայաստանին վերաբերող հողվածները պայմանագրի տեքստ ընդգրկելու նախաձեռնությունը ելնում էր ռուսական և առաջին հերթին հայկական կողմից»⁷: Ընդգծում ենք, որովհետև Լ. Ս. Սեմյոնովը շեշտում է, թե ինչպես էր Հայ առաջադիմական շրջաններում խմորվում և հասունանում այդ հարցը. Երևանի ժամանակավոր վարչության անդամ Ներսեսը (Աշտարակեցին – Վ. Ս.), որը Ռուսաստանին Հայաստանի միացման կողմնակից էր, կազմեց «Գրուլթյուն հայերի մասին հաշտության բանակցություններում ընդգրկելու համար»⁸:

Այդ «Գրուլթյունը» արքեպիսկոպոս Բարսեղի միջոցով հասցվել է Դեհ-Կարխան Ի. Ֆ. Պասկևիչին: Ի դեպ, սահմանային մարզերին քաջածանոթ արքեպիսկոպոս Բարսեղն անձնազես ծանոթ էր բանակցությունների մասնակից Ա. Ս. Գրիբոյեդովին: Դեկտեմբերի սկզբներին հանդիպելով Ի. Ֆ. Պասկևիչի հետ՝ Բարսեղը նրան է հանձնում նամակը, որտեղ գլխավոր ուշադրությունը սևեռված էր Պարսկաստանից Ռուսաստան հայերին գաղթեցնելու հարցին⁹:

Պաշտոնական դիմումը, ուղղված Պասկևիչին, արվեց 1827 թ. դեկտեմբերի 27-ին: Բացի գաղթից, Ներսես Աշտարակեցին առաջարկում էր նաև պարսից կառավարութայնը պարտավորեցնել՝ ապահովագրելու գաղթող հայերի ունեցվածքը կամ հարմար գներով հատուցում տալ¹⁰:

Պայմանագրի մեջ հայերին վերաբերող հողվածների հարցում մեծ դեր են կատարել նաև Լազարյան եղբայրները (Եղիազար Լազարյանը Ի. Ֆ. Պասկևիչի կողմից կանչվել է Կովկաս հայերի գաղթը կազմակերպելու համար)¹¹:

Հանգամանորեն նկարագրելով հայերի ծավալած լայն շարժումը՝ վերոհիշյալ հողվածները պայմանագրում ընդգրկելու համար, Լ. Ս. Սեմյոնովը նշում է, որ ոչ Ի. Ֆ. Պասկևիչը և ոչ Ա. Մ. Օբրեսկովը իրենք չմտցրին այդ հողվածները պայմանագրի մեջ, որովհետև Անդրկովկասի հարցում «համեստ վերաբերմունք» ունեցող Ի. Ֆ. Պասկևիչը ամեն դեպքում առաջնորդվում էր կառավարական քաղաքականությունում և ուղղակի գործում էր Նիկողայ I-ի հրահանգներով¹²: Մինչդեռ ռուսական կողմի մյուս ներկայացուցիչը՝ Ա. Ս. Գրիբոյեդովն ամեն ջանք գործադրեց, որպեսզի այդ հողվածները շարադրվեն պայմանագրում: Ինչպե՞ս դա եղավ: «Գրիբոյեդո-

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 108:

⁹ Լ. Սեմյոնովը չի նշում, թե որտեղ է այդ «Գրուլթյունը» – Վ. Ս.:

¹⁰ Ա. С. Семенов. Նշվ. աշխ., էջ 108:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

վը բանակցութիւնները ամենակալի մասնակիցներից էր, բայց՝ որպէս ղեկավանագիտական պաշտոնյաներից (չինովնիկներից – Վ. Ս.) մեկը: Դրա հետ մեկտեղ նրա ղեկավանագիտութիւնը, ուրիշների հետ համեմատած, տարբերվում էր հատկապէս այնպիսի գծերով, որոնց անհրաժեշտութիւնը ընդգծվում էր հայկական «Գաղտնի գրութեան» մեջ: ...Ա. Ս. Գրիբոյեդովի ամենակալի մասնակցութիւնը Պարսկաստանի հետ խաղաղութեան պայմանագրի մշակմանը, նրա սերտ կապերը Հայաստանի հետ՝ ղեռ մինչև պայմանագրի ավարտը, հնարավորութիւն են տալիս ենթադրելու, որ հայ ժողովրդի շահերը պաշտպանող Թուրքմենչայի պայմանագրի հոգւածները կազմված են հենց նրա կողմից»¹³:

Իհարկէ, այս կոնկրետ եզրահանգումը, ինչպէս նշում է ինքը հեղինակը, պետք է ընդունել որոշ վերապահութեամբ, քանի որ պատմական հավաստի փաստերի բացակայութիւնը ինչպէս Լ. Ս. Սեմյոնովին, այնպէս էլ շատ այլ հետազոտողների լոկ տրամաբանական եզրահանգման հնարավորութիւն է ապառիս¹⁴:

Վերոհիշյալ ժամանակաշրջանում Ա. Ս. Գրիբոյեդովի ղեկավանագիտական գործունեութիւնը լուսաբանող խորհրդային համարյա բոլոր ուսումնասիրողները (Ս. Վ. Շոստակովիչը, Օ. Ի. Պոպովան, Ի. Կ. Ենիկոլոպովը, Վ. Ա. Պարսամյանը, Զ. Տ. Գրիբորյանը, Բ. Պ. Բալայանը և ուրիշներ)¹⁵ ըստ ամենայնի նշում են Ա. Ս. Գրիբոյեդովի կարևոր դերը ռուս-պարսկական բանակցութիւնների տարբեր փուլերում, բայց, փաստորեն, միայն Լ. Ս. Սեմյոնովին է (այն էլ, ինչպէս նշում է Օ. Ի. Պոպովան, մասնակի չափով) լուսաբանում այն հարցը, թե ինչ չափով է մասնակցել Ա. Ս. Գրիբոյեդովը Թուրքմենչայի պայմանագրի հոգւածների ձևակերպմանը և Հայաստանի շահերն արտահայտող հոգւածները տեքստի մեջ մտցնելուն:

Ա. Ս. Գրիբոյեդովի գործուն մասնակցութեան մասին նույնպէս «տրամաբանական եզրահանգումներ» են արել Վ. Տ. Պաշուտոն¹⁶ և մասնավորապէս Վ. Ա. Պարսամյանը¹⁷:

Վերջինս նույնպէս տրամաբանորեն պնդում է, որ պայմանագրում հայերին վերաբերող հոգւածները կազմելու հարցում գործուն մասնակցութիւն է ունեցել Ա. Ս. Գրիբոյեդովը: Նա ևս շեշտում է հայերի կյանքում Թուրքմենչայի պայմանագրի բացառիկ կարևորութիւնը:

Վ. Ա. Պարսամյանը¹⁸, ինչպէս հետագայում Լ. Ս. Սեմյոնովը, նշում է Ա. Ս. Գրիբոյեդովի՝ Արևելքը լավ իմանալու և գիտելիքներով մյուսներից բարձր կանգնած լինելու մասին: «Դեհկարխանի և Թուրքմենչայի կոնֆերանսներին մասնակցած ռուսական բոլոր ներկայացուցիչներից նա ամե-

¹³ Նույն տեղում, էջ 110:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նրանց տեսակետների շարադրանքը տե՛ս Բ. Ս. Բալայան. *Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России*. Ереван, 1988, с. 179-183.

¹⁶ В. Т. Папуто. *Дипломатическая деятельность А. С. Грибоедова*. — «Исторические записки», т. 24, 1947.

¹⁷ Վ. Ա. Պարսամյան. *Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերութիւնները*, Երևան, 1947:

¹⁸ Նույն տեղում, էջ 81-82:

նից ավելի իրազեկ, փորձված և հմուտ դիվանագետն էր, — ասում է նշանավոր գրիբոյեդովագետ Ն. Կ. Պիկսանովը, — արտաքին գործերի մինիստրոսթյան ներկայացուցիչ Օբերսկովը, ինքը՝ Պասկևիչը, նոր մարդիկ էին արևելյան քաղաքականության մեջ, և պատմական խոշոր նշանակություն ունեցող հաշտության բոլոր բանակցությունների ոգեշնչողը Գրիբոեգովն էր»¹⁹:

Պրոֆեսոր Վ. Ա. Պարսամյանը արձանագրում է, թե գլխավոր հրամանատար Ի. Ֆ. Պասկևիչը խիստ խանդոտ էր ուրիշների փառքի նկատմամբ և դովեստների հարցում ժլատ էր նրանց հանդեպ, այնուամենայնիվ, ստիպված էր նշել Ա. Ս. Գրիբոյեդովի կարևոր դերը Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործում: «... Պասկևիչն աշխատում էր ուսուսական դիվանագիտության այդ խոշոր հաղթանակը (Թուրքմենչայի պայմանագիրը — Վ. Ա.) ևս իր անվան հետ կապել... Թուրքմենչայի պայմանագիրը Ա. Ս. Գրիբոեդովի հետ ուղարկելով թագավորին, Պասկևիչը նրա մասին գրում է. «Ես համարձակվում եմ նրան (Գրիբոեդովին) ներկայացնել որպես մի մարդու, որն ինձ մոտ քաղաքացիական (Շչերբատովի մոտ տրված է՝ «քաղաքական գործերում» — Վ. Ա.) գործերում չափազանց օգտակար է եղել: Ես նրան եմ պարտական այն մտքի համար, որ պայմանադիր չկնքել մինչև նախօրոք չստացվի կոնսուլիցիայի մի մասը: Հետագայում ապացուցվեց, որ առանց դրան մենք երկար ժամանակ չէինք հասնի ցանկացած արդյունքի»²⁰:

Առաջնորդվելով այն իրողությամբ, որ հայերն իրենց ներկայացուցիչը չունեին ո՛չ Թուրքմենչայի և ո՛չ էլ դրանից առաջ եղած բանակցությունների ժամանակ, և որ այդ շահերը գերազանցապես ներկայացնում էր Ա. Ս. Գրիբոյեդովը, Վ. Ա. Պարսամյանը, ինչպես նաև հետագայում Լ. Ս. Սեմյոնովը, հանգում են այն եզրակացության, որ Թուրքմենչայի պայմանագրի՝ հայերին վերաբերող հոդվածների հեղինակը հենց նա է²¹: Վերոհիշյալ հեղինակների հետ համակարծիք է նաև պրոֆ. Զ. Տ. Գրիգորյանը²²:

Թուրքմենչայի պայմանագրի մեծ նշանակության, դրա՝ Անդրկովկասի ժողովուրդների կյանքում ունեցած բացառիկ դերի մասին նշում է նաև Ա. Վ. Շոստակովիչը, որն առանձնահատուկ շեշտում է Ա. Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական ունակությունները²³:

Գաղտնիք չէ, որ դեռևս Ա. Ս. Գրիբոյեդովի ժամանակակիցների վկայություններում դրվատանքով է խոսվում նրա՝ բարձր զարգացած անձ լինելու մասին, միաժամանակ վկայակոչվում են բնավորության չափազանց հակասական դժերը (իրենով չափից ավելի տարվելը, չարախոսություններ

¹⁹ Նույն տեղում, էջ 82-83: Հմմտ. Полное собрание сочинений А. С. Грибоедова. Под ред. Н. К. Пиксанова. СПб., т. I, 1911, с. XXIX.

²⁰ Վ. Ա. Պարսամյան. Նշվ. աշխ., էջ 83-84: Տե՛ս նաև Генерал-фельдмаршал князь Паскевич. Его жизнь и деятельность. По неизд. источн. составил Ген. штаба ген.-майор кн. Щербатов. СПб., т. III, 1890, с. 95:

²¹ Վ. Ա. Պարսամյան. Նշվ. աշխ. էջ 87-88:

²² Զ. Տ. Գրիգորյան. Հայ և ուսուսական ժողովուրդների դարավոր բարեկամությունը. Երևան, 1960, էջ 266:

²³ С. В. III о с т а к о в и ч. Дипломатическая деятельность А. С. Грибоедова. М., 1960, с. 157-158.

րը, քամահրական պահվածքը և այլն): Եթե ժամանակակիցներից ոմանք ինչ-ինչ պատճառներով այդ «պարագաները» անտեսել են, ապա խորհրդային պատմագրության ներկայացուցիչներն աշխատել են ընդհանրապես շրջանցել նրա խառնվածքի այդ յուրահատկությունները: Ոչ ոք չի փորձել Ա. Ս. Գրիբոյեդովի ղեկնապետական գործունեությունը հարաբերել նրա հակասական բնավորությանը:

Եթե արտաքին գործերի նախարար կոմս Նեսելրոդեն, Ի. Ֆ. Պասկևիչը և Ա. Մ. Օբրեսկովը ցարական կառավարության գաղութային քաղաքականությունը հետևողականորեն իրականացնողներն էին, ապա նույնը կարելի է ասել նաև Ա. Ս. Գրիբոյեդովի մասին, քանի որ նա նույնպես այդ դարաշրջանի ազնվականության ներկայացուցիչն էր և պաշտոնյա, հետևաբար նույն քաղաքականության իրագործողներից մեկը: Այս դեպքում, եթե ցարիզմին չէին հետաքրքրում հայկական շահերը, իսկ Ի. Ֆ. Պասկևիչն ու Ա. Մ. Օբրեսկովն էլ չէին առաջարկում մտցնել հողվածները, ապա վերոհիշյալ հեղինակներն ինչո՞ւ չեն փորձում ցույց տալ, թե այդ ինչպե՞ս եղավ, որ նրանք հանկարծ սկսեցին հետաքրքրվել ու համաձայնեցին պայմանագիր մտցնել վերոհիշյալ հողվածները:

Դիվանագետ Ա. Ս. Գրիբոյեդովի կարիերան ընդգրկում է 1817-1829 թթ. (ընդամենը 12 տարի), իսկ Հայաստանի ազատագրության համար ղեկնապետական պայքարը լրջորեն ծավալվել է սկսած Պետրոս Մեծի և Եկատերինա II-ի ժամանակներից և դրան հասնելու ուղիների, ակնկալվող օգուտների ու շահերի վերաբերյալ հայկական փաստարկներն արդեն վաղուց կային Ռուսաստանի արտաքին քաղաքականության զինանոցում: Իսկ ո՞ւր մնացին կայսեր և արտաքին գործերի նախարարության հրահանգները, որոնք ուղղվում էին Կովկասյան կորպուսի հրամանատարությունը և ղեկնապետական աշխատակազմին:

Մի փոքր շեղվենք և բերենք փաստարկներ: Վերոհիշյալ հեղինակները (նաև՝ Վ. Տ. Պաշուտոն) միշտ ներկայացնում են Ա. Ս. Գրիբոյեդովի՝ հայ ժողովրդի բարեկամ և հայերի շահերի եռանդուն պաշտպան լինելու համաձայն: Նրանք միայն փաստում են Ա. Ս. Գրիբոյեդովի շփումները և բարեկամական հարաբերությունները բարձրաշխարհիկ և հոգևոր հայ անձանց հետ: Ոչ մի տեղ փորձ չի արվում ցույց տալու, որ ազնվականական և մեծապետական պատվախնդրությունը (ամբիցիաները) թույլ չէին տա Ա. Ս. Գրիբոյեդովին հարաբերվել ստորին խավերի՝ հայ, վրացի և մահադանդական բնակչության հետ: Օրինակ՝ Ա. Ս. Գրիբոյեդովի մտերիմ Ֆ. Բուլգարինը վկայում է. «Նա ուրախանում էր, որ օտարերկրացին իր տաղանդը նվիրաբերում էր Ռուսաստանին և երախտապարտ էր յուրաքանչյուրին, ով ծառայություն կմատուցի իր հայրենիքին ... Գրիբոյեդովը օտարերկրացի չէր համարում Ռուսաստանին միացված շրջանների բնակչությանը, բայց, ինչպես մտքի հատուկ ձև ունեցող ամեն մի մարդ, Գրիբոյեդովն ավելի շատ սիրում էր «սլավոնական սերունդներին» և ցանկանում էր, որ միանման արժանիքներ ունեցող երկու մարդուց միայն ազգակիցը նախընտրելի լիներ այլազգից»²⁴:

²⁴ Грибоедов, его жизнь и гибель в мемуарах современников. Л., 1929, с. 19.

Ա. Ս. Գրիբոյեդովը իր հուշերում և որոշ նամակներում բավական քամահրական վերաբերմունքով է խոսում հայերի մասին. մի չնչին բամբասանքի առիթով լուսն ուղտ դարձնելով հայերին խառնակիչ ու ստահող լուրեր տարածողներ է ներկայացնում²⁵: Մագարովիչին (Պարսկաստանում ոռոսական առաքելության նախկին ղեկավար – Վ. Ս.) Ա. Ս. Գրիբոյեդովը գրում է. «Ինչ ստոր ծնունդ են այդ հայերը՝ Նրանցից ոչ մեկը ճանաչել չէր ուզում ինձ, և միևնույն ժամանակ միշտ ականջիս փսփսում են, որ մենք նրանց ապագա հովանավորներն ենք...»²⁶: Եվ սա Ա. Ս. Գրիբոյեդովին ասում է այն բանից հետո, երբ փորձել է ձի վերցնել մի հայից, իսկ վերջինս նրանից վարձ է պահանջել:

Կարծում ենք՝ այս կարգի «գնահատությունները» այնքան էլ հիմքեր չեն տալիս հայկական հոգվածները սեփական նախաձեռնությամբ պայմանագրի մեջ մտցնելու բացառիկ դերակատարը Ա. Ս. Գրիբոյեդովին համարելը:

Վերը ասվածից հետևում է.

1. Լ. Ս. Սեմյոնովը ճիշտ է նշում, թե ցարիզմը քաջ զիտակցում էր, որ ոռոս-պարսկական առևտուրը հայերի ձեռքում էր, դրա համար էլ չառարկեց պայմանադրի այն հատվածին, որը նախատեսում էր հայկական շահերի պաշտպանությունը²⁷: Սակայն չգիտես ինչու չի մասնավորեցնում, որ հայերի ներկայացրած ծրագիրն իրոք համոզիչ էր և փաստարկներով լի, ու հենց դա է համոզել Ի. Ֆ. Պասկևիչին:
2. Վերոհիշյալ հիդինակները չեն փորձում ընդունել, որ չի բացավում, որ հայ առաջադեմ գործիչները, գիտենալով Ա. Ս. Գրիբոյեդովի ազատամիտ հայացքները, մտերմիկ կապեր ունենալով նրա հետ, համոզել են նրան՝ Ի. Ֆ. Պասկևիչին (որն արդեն ձեռքի տակ ուներ և ծանոթ էր Ներսեսի «Գրությունը») շահագրգռելու հայկական հոգվածները պայմանագրի մեջ մտցնելուց հետո ակնկալվող օգուտներով և շահերով:
3. Մեր կարծիքով հայ գործիչները Ա. Ս. Գրիբոյեդովին են դիմել ոչ միայն նրա համար, որ նա իրենց հետ մտերիմ էր, այլ պարզապես քաջատեղյակ էին Ա. Ս. Գրիբոյեդովի և Ի. Ֆ. Պասկևիչի ազգակցությունը ու գտնում էին, որ նա կարող է համոզել վերջինիս և հոգվածներն էլ լավագույնս գրագետ ձևակերպել:
4. Վերոհիշյալ հեղինակներից ոչ մեկը (դա ժամանակին նշում էր Ա. Պ. Բերժեն) չի փորձում բացատրել կամ պատմական տեսակետից արժևորել այն գործողությունները, որ Ա. Ս. Գրիբոյեդովը, ի շահ մահմեդական վաչկատուն ցեղերի և նրանց ամեն գնով հանգստության մեջ պահելու, Ի. Ֆ. Պասկևիչին առաջարկում էր Նախիջևանի հայերի 500 ընթանիք (թեկուզ ներգաղթած) համոզելով կամ հարկադրաբար տեղափոխել այլ վայրեր, իսկ հայկական բարբեր տարածքները թողնել մահմեդականներին²⁸:

²⁵ А. С. Грибоедов. Сочинение в двух томах, т. 2, М., 1971, с. 55-56.

²⁶ Նույն տեղում, էջ 198:

²⁷ А. С. Семенов. Նշվ. աշխ., էջ 109:

²⁸ А. П. Берже, А. С. Грибоедов. Деятельность его как дипломата (1827-1829 гг.). – "Русская старина". СПб., 1874, с. 747-748.

5. Կարծում ենք, որ Թուրքմենչայի պայմանագրի մեջ հայկական հոդվածները մտցնելու հարցում միայն Ա. Ս. Գրիբոյեդովի բացառիկ դերակատարումն անվերապահորեն ընդունելը թերևս այնքան էլ ճիշտ չէ: Ավելի ճիշտ է հարցը դիտել հայ գործիչների առաջարկների, Ա. Ս. Գրիբոյեդովի թափած ջանքերի, Ի. Ֆ. Պասկևիչի փառասիրության և պետերբուրգյան արքունիքի համաձայնության հավաքական ամբողջության մեջ:

ВОПРОС УЧАСТИЯ А. С. ГРИБОЕДОВА В ЗАКЛЮЧЕНИИ
ТУРКМЕНЧАЙСКОГО ДОГОВОРА В ОЦЕНКЕ СОВЕТСКОЙ
ИСТОРИОГРАФИИ

ВАГРАМ СИМОНЯН

Р е з ю м е

Армянская церковь и представители национальной интеллигенции ясно осознавали историческое значение момента после окончания русско-персидской войны и при составлении договора хотели использовать этот шанс для освобождения части армян от мусульманского ига. Именно они попытались уговорить русских деятелей ввести в договор статьи, касающиеся армян (ст. III, IV, т. е. "присоединение Восточной Армении к России", ст. XV – "переселение армян"). А. М. Обресков, И. Ф. Паскевич, А. С. Грибоедов, на наш взгляд, согласились с предложением, преследуя государственные интересы России. Сопоставлением фактов и методом анализа с уверенностью можно констатировать, что эти статьи были введены в договор А. С. Грибоедовым по настоянию армянских деятелей и с согласия командования Кавказом.

THE QUESTION OF PARTICIPATION OF A. S. GRIBOYEDOV IN SIGNING THE
AGREEMENT OF TURKMENCHAY IN THE ESTIMATION OF THE SOVIET
HISTORIOGRAPHY

VAHRAM SIMONYAN

S u m m a r y

Both the Armenian intellectuals and the Armenian church were clearly conscious of the historical significance of the moment after the end of the Russian-Persian war and in signing the agreement wanted to take the chance for liberation of a part of the Armenian people from the Moslem yoke. They themselves did their best to persuade the Russian figures to include the indicated articles in the agreement concerning the Armenians (art. III, IV, i.e. «Annexation of Eastern Armenia with Russia», art. XV «Migration of Armenians»). From our point of view I. F. Paskevich, A. M. Obreskov and A. S. Griboyedov had agreed on the suggestion pursuing state interests of Russia. By the help of logical comparison of facts and the methods of analysis we come to the conclusion that these articles were included in the agreement by A. S. Griboyedov under the strong pressure of Armenian prominent figures and with the agreement of the Headquarters of the Caucasus.